ՀՆԴԻԿ ԺՈՂՈՎՐԴԻ 1760—1763 ԹԹ. ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ ԵՎ ՀՆԴԿԱՀԱՅ ԴԱՂՈՒԹԸ

Ռ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հնդկաստանում ապաստան գտած հայ համայնքները, որոնք դարեր շարունակ վայելել են հնդիկ ժողովրդի սերն ու համակրանքը, անտարբեր չեն գտնվել գաղութային նվաճողների դեմ նրա մղած ազատագրական պայքարի նկատմամբ։ Երբ գայրույթով լցված հնդիկ ժողովուրդը զենք է բարձրացրել գաղութարարների դեմ, Հնդկաստանում իրենց երկրորդ հայրենիքը գտած առաջավոր հայերը հանդես են եկել նրա հետ ձեռք-ձեռքի տված և իրենց համեստ լուման մուծել այդ պայքարի մեջ։ Դա առանձնապես ցայտուն դրսևորվել է հնդիկ ժողովրդի՝ 1760—1763 թթ. Բենգալիայում մղած ազատագրական պայքարի ժամանակ։ Մեր ներկա ուսումնասիրության նպատակն է, գլխավորապես հայկական սկզբնաղբյուրների հիման վրա, ցույց տալ այդ պայքարի ընթացքում հայերի ունեցած գործուն մասնակցությունը։

Բենգալիայում հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին հայերի ունեցած մասնակցության մասին ժամանակակից աղբյուրները համեմատաբար սակավ տեղեկություններ են հաղորդում։ Արևմտաեվրոպական բուրժուական պատմագրությունը, հասկանալի պատճառով, հայ-հնդկական համատեղ պայքարի մասին կամ լռում է, կամ հիշում է միջանկյալ կերպով՝ աշխատելով պատմական իրադարձությունները ներկայացնել ծուռ հայելու մեջ։

1760—1763 թթ. Բենգալիայի իրադարձությունների մասին ամենից բնդարձակ և հավաստի սկզբնաղբյուրը հնդկահայ նավավար Թովմաս Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկաց» մեծարժեք աշխատությունն է՝ գրված 1768 թվականին։ Խոջամալյանին մեծ աջակցություն են ցույց տվել նրա երկու հնդիկ բարեկամները՝ ռաջա Սեիդ Ռաֆին և ռաջա Դիրիրանին. նրանց միջնորդությամբ նա իրավունք է ստացել մտնել Շահ Ալեմի արքայական դիվանատունը և իրեն հետաքրքրող հարցի մասին քաղվածքներ կատարել դիվանատան վավերագրերից։ Խոջամալյանը միաժամանակ տեղեկություններ է հավաքել ականատես մարդկանցից, որոնք, հնդինակի վկայությամբ, մասնակցած են եղել այդ պայքարին։ Ահա այս նյութերի հիման վրա նա շարադրել է իր «Պատմութիւն Հնդկացը»։

Հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին հայերի ունեցած մասնակցության փաստն իր արտահայտությունն է գտել Բենգալիայի հայտնի նովելիստ Զանգրա Զատերջիի պատմական մի նովելում, որը կոչվում է «Զանդրիա չիկհարա»։ Հեղինակը փորձել է տալ այդ պայքարի ակտիվ մասնակիցներից մեկի՝ Գևորգի խանի կերպարը, ներկայացնելով նրան որպես հնդիկ ժողովրդի ազատարար բարեկամի, մի անձնավորություն, որը հերոսաբար ընկել է այդ պայքարում։

Տվյալ իրադարձությունների մասին անգլիական աղբյուրներից որոշ նյութեր են պահվել ժամանակի պաշտոնական գրագրությունների մեջ, որոնք հրատարակվել են Արևելյան Հնդկական ընկերության պաշտոնական տեղեկագրում։ Ուշադրության արժանի են հատկապես Կալկաթայի և Փաթանայի անգլիական զորահրամանատար Էլլիսի՝ 1762 թվականի հունվարի 26-ի, 28-ի և փետրվարի 22-ի նամակները Կալկաթայի կառավարչին, Միր-Կասիմի՝ 1762 թվականի փետրվարի 22-ի նամակը, ռաջա Բոլրիի նամակը Միր-Կասիմին և այլն։ Արժեքավոր տեղեկություններ են պահվել պարսկերեն լեզվով գրված «Մուզաֆարի տարեգրության» մեջ, որի մի հատվածը, Բենգալիայի Ասիական պետական արխիվից վերցնելով, հրատարակել է հնդկահայ նշանավոր պատմաբան Մեսրոպ-Սեթը։

Բենգալիայի ազատագրական պայքարում հայերի ունեցած մասնակցության մասին պատմաբան ուսումնասիրողներից խոսել են անգլիացի պատմաբաններ Մարշմանը և Մակ-Ֆարլենը՝ անգլերեն լեզվով գրած իրենց «Հնդկաստանի պատմության» մեջ, Ինդոնեզիայի Սամառանգ քաղաքի բնակիչ Խ. Ա. Թովմասյանը՝ «Բազմավեպ» ամսագրում (1880, էջ 212—244), Ագոնցը իր բազմահատոր «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհիս» չորրորդ հատորում (էջ 63—

69) և այլն։ Ապստամբության ղեկավարներից մեկի՝ Գեորգի խանի գործունեության հատուկ գլուխ է նվիրել Մեսրոպ-Սեթը իր «Հայերը Հնդկաստանում» անգլերեն աշխատության մեջ։ Վերջապես, Գեորգի խանի գործունեության մասին թռուցիկ ակնարկ ունի Լեոն 1901 թ. «Փորձ» ամսագրում, ապա «Հայ տպագրության պատմության» երկրորդ հատորում (էջ 463—472)։

Նախքան բուն հարցին անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ տեղեկություն տալ այն իրադրության մասին, որ ստեղծվել էր Հնդկաստանում, մասնավորապես Բենգալիայում, հիշյալ ժամանակաշրջանում։

Մարքսը, խոսելով անգլիական և ֆրանսիական գիշատիչների մղած պատերազմների և նրանց վերջնական հետևանքների մասին, գրում է. «Յոթնամյա պատերազմների դեպքերը Արևելահնդկական ընկերությանը առևտրական ուժից դարձրին ռազմա-տերիտորիալ ուժ։ Հենց այդ ժամանակ էր, որ հիմք դրվեց անգլիական տիրապետությանը Հնդկաստանում»[1]։

Գաղութային շահագործումից տուժում էին հատկապես գյուղացիությունն ու քաղաքային արհեստավորությունը։ Կրկնակի շահագործման տակ ընկած գյուղական համայնքը արագ քայքայվում էր, գյուղացուց խլվում էր նրա բերքի մեծ մասը։

Հնդիկ ժողովուրդը բացահայտ զայրույթով էր լսված դեպի Եվրոպացի գաղութարարները։ Գյուղացիների կողքին երբեմն ոտքի կանգնում էին նաև հարուստ հոգատերերը։ Հսկայական հնարավորությունների տեր կամպանիան հնդկական շուկաներից կամաց-կամաց դուրս էր մղում տեղական առևտրական բուրժուազիային։

Գաղութարարների լուծը հաճելի չէր տեղացի իշխող շրջաններին ևս։ Հնդկական բազմաթիվ ռաջաներ, նավարներ և հնդիկ վերնախավի շատ ներկայացուցիչներ նույնպես վրդովված էին գաղութարարների դեմ։

Հայկական փոքրիկ համայնքները, որոնք Հնդկաստանում արտոնություններ ունեին և ազատ էին, Հնդկաստանում անգլիական տիրապետության հաստատումից հետո ընկնում են տնտեսական և իրավական ծանր վիճակի մեջ։ Առանձին-առանձին առևտուր անող հայ վաճառականները կամ առանձին փոքրիկ համքարություններով հանդես եկող հայ արհեստավորները, լինեին այդ համքարությունները զուտ հայկական թե հնդիկների հետ խառը, անզոր էին դիմադրելու թիկունքում հզոր բանակ ունեցող անգլիական ընկերությանը, որն աշխատում էր իր գաղութն ընդարձակել արշավանքների և արյունահեղ էքսպեդիցիաների միջոցով։

Ակադ. Ա. Կարինյանը, քննության առնելով հնդկահայ համայնքի քայքայման պատճառները, հետևյալ ուշագրավ դիտողությունն է անում. «Հնդկական վաճառականները եղել են գլխավորապես, նույնիսկ բացառապես, արևելյան և հնդկական էքսպորտային առևտրի ներկայացուցիչներ։ Հնդկաստանի ներքին շուկաներում հայերը կապված էին տեղական տնտեսության հետ... Հնդկաստանի էքսպորտի կրճատումը կամ անկումը, քայքայելով հնդկական վաղեմի տնտեսությունը, մահացու հարված պիտի հասցներ առաջին հերթին հնդիկ, պարսիկ և հայ վաճառականներին»։

Մահացու այդ հարվածից անմասն չէին մնում, անշուշտ, վաճառականության հետ կապված հազարավոր արհեստավորներ, գործավորներ, ծառայողներ։ Դա էր հիմնական պատճառներից մեկը, որ հնդկահայությունը, հնդիկների հետ համատեղ, պայքարի էր դուրս գալիս։

Հնդիկ ազատասեր ժողովուրդը հաճախ էր զենք վերցնում թշնամու դեմ՝ հանուն իր ազատության և անկախության։ Նման ապստամբություններից էր ռաջա Շիրազ-Դովլուի ղեկավարությամբ բարձրացած ապստամբությունը, որը ամենակարճ ժամանակամիջոցում ընդունեց հակաանգլիական բնույթ։ Ապստամբ հնդիկները գաղութարարներին դուրս քշեցին Բենգալիայից, որտեղ անգլիական վարչական կենտրոն Կալկաթան այրվեց և գաղութային էքսպեդիցիոն զորքերը ոչնչացվեցին։ Սակայն նոր ժամանած անգլիական զորքն ու նավատորմը, ադմիրալ Կլայվի ղեկավարությամբ, Բոմբեյից շարժվեցին Կալկաթա և արյան մեջ ճնշեցին այդ ապստամբությունը։ Գաղութային զորքը գրավեց Բենգալիայի բոլոր խոշոր կենտրոնները։ Ապստամբության ղեկավար Շիրազ-Դովլուն սպանվեց։ Անգլիացիները Բենգալիայի գահը բարձրացրեցին Միր-Ջաֆարին, որ փաստորեն իրենց կամակատարն էր։

1760 թ. անգլիացիների թելադրանքով Միր-Ջաֆարը կնքեց մի պայմանագիր, որով Բենգալիան պարտավորվում էր հատուցելու ապստամբության ժամանակ անգլիացիների կրած վնասները։ Այդ վնասների չափը որոշում էին իրենք՝ անգլիացիները։ Հնդիկ բնակչությունը այդ պայմանագրով պարտավոր էր նաև վճարելու «24 պարագոն» կոչվող հարկը, որը առաջ հավաքում էին

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, էջ 354։

տեղական ֆեոդալները, իսկ Արևելահնդկական ընկերությունը իրավունք էր ստանում առանց որևէ մաքսի առևտուր անել Բենգալիայում։ Եվ, վերջապես, անգլիացիները իրենց զորքը պետք է պահեին ի հաշիվ հնդիկ բնակչության։

Պայմանագրի կետերի կատարումը շատ շուտով Միր-Ջաֆարի ֆինանսական ապարատը կանգնեցրեց ճգնաժամի առաջ։ Անգլիացիների պարտքերը վճարելու համար ժողովրդից հավաքվող գրամը, որի գումարը հասնում էր 17,7 միլիոն ռուպիի, ինչպես նաև անգլիական գաղութային զորքին կերակրելու հետ կապված ծախսերն ու մյուս հարկերը քայքայեցին երկրի տնտեսությունը։ Հնդիկ ժողովրդի պայքարն ավելի սուր բնույթ ստացավ և Բենգալիայում տարբեր հաջողություններով շարունակվեց 1760—1763 թթ։ Այդ պայքարին ակտիվորեն մասնակցեցին հայերը։

Բենգալիայի գեպքերը ունեցել են հետևյալ ընթացքը։ Միր-Ջաֆարին հաջորդող Միր-Կասիմը (Կասում Ալի) պաշտոնապես Բենգալիայի և Բհարի նավաբ է հայտարարվում անգլիացիների կողմից 1760 թվականի հուլիսի 20-ին։ Ըստ որում, անգլիացիները նախքան նրան պաշտոնապես ճանաչելը, պահանջում են, որ գա իրենց մոտ՝ երդմամբ դաշինք կնքելու։ Միր-Կասիմը կատարում է անգլիացիների պահանջը. «Մեծաս պատրաստությամբ և ընծայիք» գալիս է Կալկաթա և կնքում դաշտնի պայմանագիր։ Այս պայմանագիրը ավելի ծանր պարտավորություններ էր պարունակում, քան Միր-Ջաֆարի կնքած պայմանագիրը։ Միր-Կասիմը պարտավորվում է թույլ տալ անգլիացիներին վարելու բոլոր գործերը, Արևելյան հնդկական կոմպանիային թույլատրում է հավաքել հարկերը՝ կոմպանիայի ծախսերը հոգալու և անգլիական գաղութային զորքերը պահելու ու զինելու համար։ Գահ բարձրանալուց անմիջապես հետո, նա անգլիացիներին վճարում է հսկայական մի գումարի գոհարեղեն։

Սակայն անգլիացիներին կատարած զիջումները Միր-Կասիմի կողմից դիվանագիտական մի խորամանկություն էին իշխանության գլուխ անցնելու և Բենգալիայում ինքնուրույն ամուր պետականություն ստեղծելու համար։ Ինչպես կտեսնենք, երբ նա հասնում է իր նպատակին, ոչ միայն չի ճանաչում անգլիական գաղութարարների իշխանությունը, այլև զինված պայքարի է դուրս գալիս նրանց դեմ՝ անկախություն և ինքնուրույնություն ձեռք բերելու համար։

Գահ բարձրանալուց անմիջապես հետո Միր-Կասիմը առաջին հերթին եռանդուն կերպով ձեռնամուխ է լինում իր բանակի կազմակերպմանը։ Այդ պատասխանատու գործը Միր-Կասիմը հանձնարարում է Գրիգոր Հարությունյանին, որը հնդկական և եվրոպական գրականության մեջ հայտնի է Գեորգի խան անունով։

Գեորգի խանի մասին սկզբնաղբյուրներում բավականաչափ տեղեկություններ են պահպանվել։ Հնդկաստանի պատմության նշանավոր մասնագետ անգլիացի Մարշմանը, որը հենվելով սկզբնաղբյուրների վրա, հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Միր-Կասիմն իր ունեցած արագ հաջողությունների համար գլխավորապես պարտական էր մի հայի, որը ծնվել էր Սպահանում և Արևելքում հայտնի էր Գեորգի խան անունով։ Նա սկզբում կտավի վաճառական է եղել Հույլեյում, բայց երբ նրան վստահվեց պատասխանատու պաշտոն, իսկույն դրսևորվեց նրա արտակարգ հանճարը և հսկայական նախաձեռնությունը։ Նա երեք տարուց քիչ ժամանակում կարողանում է ստեղծել 15.000 հեծելազորից և 25.000 հետևակից բաղկացած բանակ, մարզում այն կոմպանիայի բանակի ձևով... Միր-Կասիմը, զզվելով անգլիացիների հարստահարությունից, զորքեր հանեց նրանց դեմ և մի շարք պատերազմներ սկսեց, որոնք մղվում էին մեծ հմտությամբ և համառությամբ։ Մեզ համար հետաքրքիր է այն, որ Միր-Կասիմի բանակի հրամանատարը մի հայ էր Գեորգի կամ Գրիգոր խան անունով, որ խելացի, կտրիճ զինվորականի համբավ էր վայելում»[1]։

Գեորգի խանն իր կազմակերպած բանակի հրամանատարների շարքում, հնդիկների կողքին, ընդունում է նաև իր հայրենակիցներին։

Միր-Կասիմը «ընտրեաց իւր զօրապետս և զորս յազգէս Հայոց, քանզի զօրացեալ և ծաղկեալ էին յոյժ յանմ ժամանակի հայք ի Պանկալայ և ի շրջակայ կողմունս, որոց զօրութիւն և աներկիւղ քաջութիւն սրտի համբաւեալ էր առ ամենայն հնդիկս։ Գլուխ սոցա ամենեցուն էր Կորկին կամ Գրիգոր խանն, եղբայր մեծի Պետրոս աղային Յարութիւնեան, այրն մեծախորհուրդ կռոիվամիտ, առոյգ, անձն քաջազօրի, բաղցրաբարոյ խնամակալ և սիրելի ամենեցուն։ Զսա կացոյց Մասրմ Ալին սպարապետ ամենայն զօրաց իւրոց և արար իւր ներքին և մտերիմ խորհրդական

[1] «Մուրճ», 1901, էջ 190։

սակս իմաստուն կառավարութեան մինչև ոչ գործեր ինչ գործս քաղաքականս առանց խորհրդոց Նորա...»[1]։

Բենգալիայի հնդկական զորքերի հրամանատարներից հայտնի են հետևյալ հայ զինվորականները։

1. Մարգար-Հովհաննես Քալանթարյան՝ Նոր Ջուղայից. Հնդկաստան գալուց առաջ ծառայել է Հոլանդիայում և բացառիկ ընդունակությունների շնորհիվ հասել գեներալի աստիճանի։ Հայտնի հնդիկ պատմաբաններ Սինկխը և Բաներջին ևս «Հայ Մարգարին» իրենց «Հնդկաց պատմության» մեջ հիշում են որպես հնդկական բանակի հրամանատարի։

2. Հարություն Նահապետի Այվազյան՝ Նոր Ջուղայից։

3. Գրիգոր Նահապետի Այվազյան՝ Նոր Ջուղայից։

4. Պետրոս Աստվածատրյան՝ Հայաստանի Աղնձիկ գյուղից։

5. Մարտիրոս Գրիգորյան՝ մարաղեցի։

6. Ղազար Հակոբյան՝ Ատրպատականի Մարաղա գավառի Հորա գյուղից։

7. Սուքիաս Ավետիսյան՝ Ատրպատական քաղաքից։

8. Հովհաննես Նազարյան՝ Բավրիզեցի։ Սա հանդիսացել է Միր-Կասիմի պահակախմբի պետը։

Հայ հրամանատարների ղեկավարած հնդկական զորամասերի թիվն անցնում էր 10.000 հոգուց։

Միր-Կասիմի բանակում կային հարյուրի չափ ուրիշ հայ զինվորականներ ևս, որոնք հավաքվել էին տարբեր տեղերից։ Նրանցից ոմանք բարձրացան մինչև կապիտանի ու գնդապետի զինվորական աստիճանները։ Խոջամալյանը մի այլ կապակցությամբ հիշում է չորս բարձրաստիճան հայ հրամանատարների անուններ ևս՝ Մկրտիչ-Զաքարիա՝ ղարասունցի, Մելքոն՝ ասորախանցի, Նիկոլ՝ ջուղայեցի և Հակոբ-Գրիգոր՝ ջուղայեցի։

Միր-Կասիմն իր դիրքն ավելի ամրացնելու համար Գեորգու խորհրդով աշխատում է դաշնակից դառնալ Հնդկաստանի թագաժառանգ Ալի Գուհարին, որն իրեն հռչակել էր թագավոր՝ Շահ Ալեմ II անունով. սրա հետ թշնամական փոխհարաբերության մեջ էր գտնվել Միր-Կասիմի նախորդը։

Միր-Կասիմը նավաբ դառնալուց հետո, Սուրա Բահարում ներկայանում է Հնդկաստանի թագավորին և բարեկամաբար հայտնում նրան իր հպատակությունը։ Նա միաժամանակ խոստանում է աջակցել Ալի Գուհարին՝ հայրենիքի ընդհանուր թշնամիների դեմ նրա պայքարում։ Խոջամալյանը պատմում է, որ Միր-Կասիմը «...արար խաղաղութիւն ընդ Շահ Ալեմ թագաւորին. գնաց ի սպաս նորա՝ տալով նմա և բազում դանձս, որով և ընկալաւ ի նմանէ հրամանս լինել ի նմանէ նորա աշխարհապետ երկունց սուրայիցն (նկատի ունի Բենգալիայի և Բհարի շրջանները—Ռ. Ա.)»[2]։ Նա միաժամանակ խոստանում է իր դրամի վրա դրոշմել հնդկական թագավորի պատկերն ու անունը՝ որպես սուվերեն իշխանավորի։

Շահ Ալեմ II-ը Միր-Կասիմին պաշտոնապես ճանաչում է Բենգալիայի փաղիշահ, իսկ Հարությունյանին՝ նրա զորքերի գլխավոր հրամանատար։ Հարությունյանը հնդիկ ժողովրդին մատուցած ծառայությունների համար արժանանում է Ալի Գուհարի հատուկ գնահատականին։

Ժամանակ շահելու և ապստամբելու նպատակով ուժերը մոբիլիզացնելու համար, Գեորգու առաջարկով Միր-Կասիմը շարունակում է թաքուն պահել իր դիրքը և կանոնավոր վճարել անգլիացիներին պատերազմական տուգանքը, կատարում է պայմանավորված կետերը, թեպետ այդ բոլորը ծանր գնով, որովհետև անգլիացիները գնալով ավելացնում էին իրենց պահանջները՝ հասցնելով մաքսը մինչև 250.000 ռուպիի։

Տեղացի հնդիկ և հայ զինագործների օգնությամբ Գեորգի խանը կարողանում է տեղում կազմակերպել զենքի արտադրությունը և այդ զենքով զինում է հնդկական բանակը։ Ուշադրության արժանի է այն փաստը, որ նա պատրաստել է տալիս դարբնոցներ և ձուլում թնդանոթներ։ Մարշմանը, օգտվելով հնդկական աղբյուրներից, այդ մասին գրում է. «(Գեորգը) հրազենս կռեաց անգլիականացն գերագոյնս և մարդեաց զօրականն հրազենաձիգ այնպէս, մինչև մարթել պանծայ նոցա և վաշտս իսկ անգլիացւոց»[3]։

Հնդկական արքունական դիվանատնից վերցրած վավերագրերի հիման վրա Խոջամալյանն այդ մասին հետևյալն է գրում. «Գօրգին ինքնին հնարեաց, թափեաց և պատրաստեաց զամե-

[1] Ա գ ա ն ց, Աշխարհագրութիւն..., մասն I, հատ. Ա, էջ 61—65։

[2] Թ. Խ ո ջ ա մ ա լ յ ա ն, Պատմութիւն Հնդկաց..., էջ 73։

[3] Տե՛ս «Բազմավէպ», 1880, էջ 213։

նայն հրազէնս պատերազմեաց աւելիս և զոչ պակաս քան զեվրոպացիսն»։ Գեորգու կազմակերպած զինանոցներում ձուլվող հրացանը ժամանակին հիացմունք է պատճառել ռուս մասնագետներին ու զինվորականներին։

Գեորգին ռեֆորմ է մտցնում նաև բանակում։ Նա զորաբաժակը բաժանում է երկու խմբի՝ հետևակի և հեծելախմբի և դասավորում հատուկ ռազմակարգով։ Հարվածային նպատակների համար առանձնացնում է հեծյալ և հետևակ խմբերը։ Առանձնացնում է նաև հատուկ հրետանային գումարտակներ, որոնք հետագայում մեծ վնասներ պատճառեցին անգլիացիներին։ Անգլիացիները, իմիջիայլոց, երկար ժամանակ չէին հավատում, որ հնդիկներին հաջողվել է տեղում հրանոթ պատրաստել և որ օգտագործվող հրետանին ապստամբների պատրաստածն է։

Ալի Գուհարի հետ դաշն կնքելուց հետո, Միր-Կասիմը աշխատում է հնազանդության բերել Բհարի անհնազանդ ֆեոդալներին, որը և նրան հաջողվում է։ Անգլիացիների աչքից հեռու գրտնվելու և ազատ գործելու համար Միր-Կասիմն իր ռեզիդենցիան Մաքսուդաբադից տեղափոխում է Մունկեր, որը գտնվում էր Գանգեսի ափին, Փաթնայից 40 մղոն հեռավորության վրա։

Միր-Կասիմը, նախքան անգլիացիների դեմ վճռական պայքար սկսելը, հոգ է տանում թիկունքի ապահովության մասին։ Այդ ժամանակ Բենգալիայի սահմանների վրա վտանգավոր ուժ էին ներկայացնում անգլոֆիլ ռաջաները, որոնք իրենց «ինքնուրույն» էին հռչակել։ Նրանցից առանձնապես վտանգավոր էր ռաջա Սինկխը, որն ուներ 29.000 հոգուց բաղկացած բանակ։ Կենտրոնախույս այդ ուժերը հնազանդեցնելու և երկրի սահմաններից վտանգը հեռացնելու համար Միր-Կասիմը հյուսիսային սահմանն է ուղարկում մի մեծ բանակ, որը վճռական գրոհներով ջախջախում է ռաջա Սինկխի զորքերին։

Ռազմական այս գործողությունների ընթացքում հնդկական մի զորախումբ, Գրիգոր Այվազյանի գլխավորությամբ, գաղտնի մոտենում է Ռոտասի անառիկ կենտրոն Բարսար քաղաքին և գիշերային հանկարծակի հարձակումով վճռում ճակատամարտի բախտը հօգուտ հնդիկ հայրենասերների։ Բարսարը պաշտպանող կայազորը զենքը ցած է դնում։ Այվազյանի գլխավորած զորքերը ստիպում են Ռոտասի ռաջային՝ ճանաչել ապստամբների գերիշխանությունը և ենթարկվել նրան։

Անգլիական գաղութարարները վճռական միջոցների են դիմում Բենգալիայում բռնկված ապստամբությունը իր բնում խեղդելու նպատակով։ Նրանք լավ էին հասկանում, որ այն կարող էր վարակիչ լինել ողջ Հնդկաստանի համար։ Անգլիացիները սկսում են լուրեր տարածել այն մասին, որ իբր թե Միր-Կասիմը բռնի է խլել Միր-Ջաֆարից Բենգալիայի օրինական գահը, ուստի և իրենք ցանկանում են պատժել Միր-Կասիմին։ Այդ պատրվակով նրանք խոշոր զորամասեր են կենտրոնացնում Բենգալիայի հարավային սահմանի վրա։ Բենգալիայի ազատության համար պայքարող հնդկական մի զորախումբ, Գեորգի խանի հրամանով, շարժվում է հարավ կասեցնելու անգլիական զորքերի առաջխաղացումը։

Հնդկական ապստամբ զորքերը, տեղացի հնդիկ բնակչության գործուն աջակցությամբ, ռազմական վճռական գործողություններ են սկսում բրիտանական զորքերի դեմ, ջախջախում Բենգալիայի հարավային շրջաններում եղած գաղութարարների զինվորական կենտրոնացումները և նրանց մնացորդները դուրս քշում երկրից։

Այս կռիվներին մասնակցում էին նաև ուրիշ հայ զորահրամանատարներ։ Սրանցից աչքի է ընկնում առանձնապես հազարապետ Հարությունն Մարդարյանը իր հնդիկ հեծյալներով։ Սրա զորամասին հաջողվում է շրջապատել և ոչնչացնել Մուրշիտաբադ քաղաքի և նրա շրջակայքի անգլիական կայազորը և ազատել քաղաքը թշնամուց։ Հայ հրամանատարն իր ցուցաբերած քաջագործության և հմուտ ղեկավարության համար, նավարի հատուկ կարգադրությամբ, նշանակվում է Բենգալիայի հարավային սահմանների զորքերի հրամանատար։

Արևմուտքից Բենգալիային սպառնում էին Ռամդարի, Զոթա Նագիուռի և նրանց մոտիկ շրջանների ռաջաները, որոնք գործում էին անգլիացիների թելադրանքով։ Նրանց դեմ ուղարկվում է Բենգալիայի մի այլ գումարտակ, որի հրամանատարների թվումն էին նաև Մարդար Հովհաննիսյանը և Ղազար Հակոբյանը։ Նրանք ջարդում են թշնամաբար տրամադրված նավարների ուժերը և ստիպում հանձնվել։ Ընդհանուր հաղթանակից հետո հեռացվում է անգլիական պաշտոնեություններ և կառավարիչներ են նշանակվում տեղացի բանիմաց և հայրենասեր հնդիկներից։

---

[1] Խոջամալյան, Պատմություն Հնդկաց, էջ 80։

[2] Նույն տեղում։

Բենգալիայի հնդկական բանակի հրամանատարությունն այնուհետև որոշում է դուրս գալ անգլիացիների թիկունքը և ստրատեգիական կարևոր դիրքեր գրավել։ Այդ նպատակով Գեորգին գալիս է Սունկեր, ուր նրան սպասում էր նավաբը իր թիկնապահ զորքերով։ Այստեղ առաջին անգամ հրապարակավ Բենգալիան հռչակվում է անկախ, ինքնուրույն իշխանություն և Միր-Կասիմը պաշտոնապես հրաժարվում է անգլիացիների նկատմամբ ունեցած իր բոլոր պարտավորություններից։ Դա տեղի է ունենում 1760 թվականի աշնանը։

Ուշադրության արժանի է այն մեծ վստահությունը, որ այդ օրերին տածել է Միր-Կասիմը հայերի նկատմամբ։ Նա իր թիկնապահ զորամասի հրամանատար է նշանակում մի հայի՝ Պետրոս Աստվածատրյանին. «Հազարապետն Պետրոս Աստուածատրեան իւրովք գնդովք պահապան էր Կասումալի խանին»[1]։

Բենգալիայի ազատագրման գործում Գեորգի խանի և մյուս հայերի կատարած աշխատանքի շնորհիվ, գրում է Խոջամալյանը, նրանց անունները «օր աւուր պայծառանայր անուն նորա ընդ ամենայն տեղիս... ազգն Հայոց ճոխանալով, քաջանալով, ամենայն բարութիւնս առնելով ի շինութեանն աշխարհին...»[2]։

Անգլիացիների համար ստեղծվում է աննպաստ իրադրություն, ուստի և նրանք ժամանակավորապես դադարեցնում են հարձակումը Բենգալիայի վրա, նպատակ ունենալով նոր զորքեր տեղափոխել Կալկաթա և ավելի լավ նախապատրաստվել ընդհանուր հարձակման։ Համեմատաբար խաղաղ երեք տարիների ընթացքում հսկայական աշխատանք է կատարվում Բենգալիայում։ Գաղութային շահագործումից ու արշավանքներից տուժած և քայքայված երկրի տնտեսությունը վերականգնելու համար, Միր-Կասիմը, Գեորգի խանի խորհրդով, կատարում է մի շարք կարևոր ռեֆորմներ։ Առաջին հերթին հատուկ հրամանով նա վերացնում է առևտրական մաքսերը թե ծովի և թե ցամաքի վրա։ Դրանից առաջ, փադիշահի ֆերմանի համաձայն, նման արտոնություն վայելում էր միայն կոմպանիան, ըստ որում, օտար վաճառականներին անցաթղթեր էին տալիս անգլիացիները։ Այդ անցաթղթերը, որոնք կոչվում էին «դաստակ», շուտով սկսեցին չարաշահվել անգլիացիների կողմից. նրանք այդ անցաթղթերը վաճառում էին հնդիկ վաճառականներին։ Ստացվեց այնպես, որ հնդիկները իրենց տերիտորիայում առևտուր անելու համար պետք է ունենային անգլիական արտոնություն։

Միր-Կասիմի հրամանով վերացվում են ամեն տեսակ արգելքները։ Նրա այս քայլը ծանր հարված էր անգլիական գաղութարարներին, առաջին հերթին՝ կոմպանիային։ Անգլիացիները կորցնում էին Հնդկաստանի ամենից հարուստ մասի առևտրի մենաշնորհը։

Գաղութարարները փորձում են խանգարել այս քաղաքականության կենսագործումը։ Նրանք զանազան ճանապարհներով աշխատում են համոզել նավաբին, թե նա զուր է լսում Գեորգի խանին և զրկվում մեծ եկամուտներից. խորհուրդ են տալիս նորից մաքսեր նշանակել։ Միր-Կասիմը պատասխանում է. «Վասն շինութեան և հարստութեան աշխարհի իմում արարի զայդ (այսինքն՝ մաքսերի վերացումը—Ռ. Ա.) և այժմ չէ ինձ իրաւունս դառնալ յետս յիմոց սահմանադրութեանցս»[3]։

Հետաքրքիր է այն փաստը, որ կոմպանիան նույնպես ազատված էր Բենգալիայում առևտրամաքս վճարելու պարտականությունից։ Սակայն, երբ կոմպանիայի ղեկավարները խորհուրդ են տալիս նավաբին վերացնել առևտրամաքսերի վերաբերյալ հրամանը, նա պատասխանում է. «Դուք սկսեալ էիք առնուլ զհարկս վաճառաց, որով բազումք ի պատճառս վնասու ոչ զային յերկրի իմում վաճառականութիւն առնել, այսու ազագաւ ես բարձի զամենայն հարկն, զի եկեսցեն գնեն և ի վաճառել, որով լիցի շինութիւն յաշխարհի իմում»[4]։

Օգտվելով առիթից, նավաբը հատուկ կարգադրությամբ մաքս է նշանակում կոմպանիայի ապրանքների վրա, ասելով. «Որովհետև կամքն ձեր այդպէս է, ուրեմն հաստատուն կացէք ի վերայ դաշանց ձերոց և տուք ինձ զհարկս վաճառաց ձերոց որպէս կանոն է»[5]։

Անգլիացիները շուտով մի պատգամավորություն են ուղարկում Միր-Կասիմի հետ բանակցելու համար։ Միր-Կասիմը ընդունում է անգլիական պատգամավորներին և բանակցում նրանց

---

[1] Խոջամալյան, Պատմութիւն Հնդկաց, էջ 85։
[2] Նույն տեղում, էջ 86։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում, էջ 87։
[5] Նույն տեղում։

հետ որպես հավասար կողմ։ Չնայած անգլիական պատգամավորները գլխում են ամեն տեսակ սպառնալիքների և ահաբեկումների, սակայն Միր-Կասիմը ոչ մի զիջում չի անում։

Շուտով պարզվում է, որ անգլիացիները նպատակ ունեն բանակցությունները ձգձգել, թուլացնել հնդիկների զգոնությունը և հանկարծակի հարձակումով գրավել Բենգալիան։ Սակայն նրանց այդ դավադրությունը բացվում է։ Գեորգի խանի հետախույզները ձերբակալում են անգլիական նամակատարներին և ծածկագրված («թուաբանությամբ գրեալ») նամակները հասցնում հրամանատարին։ Վերծանությունից պարզվում է, որ այդ նամակով անգլիական հրամանատարությունը Բհարի և նրա շրջապատի անգլիական մի քանի հազարանոց կայազորների հրամանատար Իլիչին կարգադրում է շարժվել և հանկարծակի հարձակումով գրավել Փաթանա ամրոցը։

Անգլիական գաղութարարների իարդախ նպատակների պարզվելուց հետո, Միր-Կասիմը և Գեորգի խանը հասկանում են, որ կանգնած են պատերազմի սպառնալիքի առջև, ուստի սկսում են վճռական միջոցներ ձեռնարկել անգլիական ագրեսիային դիմադրելու համար։

Գեորգի խանը կարգադրում է հենց ճանապարհին ձերբակալել պատվիրակության անդամներին և չթողնել նրանց Կալկաթա վերադառնալ։ Խուզարկության ժամանակ նրանց մոտ հայտնաբերվում է մոտ տասը ծրար՝ ծածկագրված նամակներով, որոնք ուղղված էին իրենց դաշնակից անգլոֆիլ ռաջաներին ու անգլիական զորքերի հրամանատարներին և առաջարկում էին անմիջապես պատերազմական գործողություններ սկսել հնդիկների դեմ։ Գեորգին հատուկ հսկողության տակ է առնում պատվիրակության ղեկավար Էմիներին։ Վերջինս փախուստի փորձ անելու ժամանակ գնդակահարվում է հնդկական պահակազորի կողմից։

Այս դեպքերից հետո Գեորգի խանը գաղտնի նամակով զգուշացնում է Մաքսուդաբադի և մյուս սահմանապահ զորքերի հրամանատարներին՝ անգլիական զորքերի հնարավոր հարձակման մասին և կարգադրում ուժեղացնել սահմանապահ կայազորները գաղութարարներին սահմանակից շրջաններում։ Ասպահովելով թիկունքը, Գեորգի խանը Մաքսուդաբադի կառավարիչ Մահմադ խանի տրամադրության տակ է դնում լավ վարժված մի մեծ զորամաս, որը միանալով նրա զորքերին, փակում է Կալկաթայից եկող բոլոր ուղիները։

Անգլիացիները, օգտվելով հարմար առիթից, ֆակտորիայի ղեկավար Էլլիսի ղեկավարությամբ, զորքեր են հանում և շրջապատում թույլ պաշտպանված Փաթանան։ Մենդի Ղուլի խանի ղեկավարությամբ ամրոցը պաշտպանող հնդկական կայազորը անկարող է գտնվում երկար դիմադրելու թշնամու ուժերին և թողնում է ամրոցը։ Անգլիացիները մտնում են ամրոց և դաժան հաշվեհարդար տեսնում հնդիկ հայրենասերների հետ։

Անգլիացիների այս հաջողությունն անակնկալի չի բերում հնդիկներին։ Լավ զինված երկու գունդ հեծելազոր է ուղարկվում Փաթանան գրաված անգլիացիների դեմ՝ հազարապետներ Մարդարի և Ղազարի հրամանատարությամբ։ Սրանք արագ երթով շարժվում են դեպի Փաթանա, շրջապատում ամրոցը և սկսում գրոհը։ Փաթանայի վրա արևելյան դարպասի ուղղությամբ գրոհող հնդկական զորքերի գումարտակը ղեկավարում է հազարապետ Մարդարը։ Այդ գումարտակի կազմում էր գտնվում հայկական ջոկատը։ Չնայած անգլիացիներն իրենց հիմնական ուժերը դասավորել էին այս ուղղությամբ, հնդիկ և հայ զինվորները շեշտակի գրոհներով կոտրում են անգլիացիների դիմադրությունն ու մտնում քաղաք։ Անգլիացիներն իրենց զորքերի մնացորդները քաշում են և ամրանում քաղաքի հյուսիս-արևելքում գտնվող միջնաբերդում, ասա «անճարացեալ մնացելոցն սկսան փախչիլ և գնալ»[1]։

Փաթանան անգլիացիներից ազատագրելուց հետո, հնդիկները հավաքում են սպանվածներին ու թաղում։ Նրանք օգնում են վիրավորներին, գերի վերցրած հնդիկ զինվորներին բաց թողնում տները, ապա անգլիացիներին հետապնդելով՝ շարժվում դեպի նրանց ամրությունները։ Գեորգի խանը թշնամուն հետապնդող հնդկական զորքերի կենտրոնից օգնության է ուղարկում դաշնակից Մենդի Ղուլի խանին՝ իր զորամասերով։ Սակայն Մարդարը, որը նավարի հրամանով նշանակվել էր այդ զորամասի գլխավոր հրամանատար, Մենդի Ղուլու զորքերին հանձնարարում է Փաթանայի պաշտպանությունը, իսկ ինքը շարունակում է թշնամու հետապնդումը։

Փաթանայի ճակատամարտում մեծ քաջություն է ցուցաբերում հայ հրամանատար Մարդարը։ Միր-Կասիմը բարձր գնահատելով նրա և նրա ղեկավարած հայկական ջոկատի մատուցած ծառայությունները, նրան շնորհում է մագիստրական՝ իշխանական կոչում և ուղարկում մեծարժեք նվերներ և մեկ փիղ[2]։ Փաթանայի այս դեպքերի մասին խոսելիս Սինկիսը և Բաներ-

[1] Խոջամալյան, Պատմություն Հնդկաց, էջ 96։
[2] Նույն տեղում։

ջին գրում են. «Փաթանայի գեպքերը ունեցան վճռական շրջադարձ, որի ժամանակ Էլլիսը ջախջախվեց»[1]։

Փաթանայի դեպքերից հետո ազատագրական պայքարը ավելի մեծ թափ է ստանում։ Օկուպացված տերիտորիաներում հնդիկ գյուղացիները, քաղաքային բնակչությունը, արհեստավորությունը ապստամբում են անգլիական իշխանությունների դեմ, հարձակվում անգլիական ֆակտորիաների վրա և բռնագրավում նրանց ապրանքները։ Նրանք հաճախ համաձակ հարձակումներ են կատարում անգլիական զորամասերի վրա, զինվում ձեռք բերված զենքով և միանում հնդիկ բանակին։ Այս բոլորը մեծապես օգնում է Բենգալիայի հնդիկ զորքերին և հեշտացնում նրանց ռազմական գործողությունները։

Էլլիսի ջախջախումից հետո Միր-Կասիմը հրամայում է Մարգարին շղաղարեցնել անգլիացիների հետապնդումը և դուրս քշել նրանց Բենգալիայի սահմաններից։ Ստանալով այդ հրամանը, Մարգարն իր զորամասերով «ընդ հրացանիւ և ընդ բոմբիւբ» երկու օրվա հետապնդումից հետո մոտենում է Բիրանա ամրոցին՝ նախօրոք ոշնչացնելով ամրոցի շրջապատի անգլիական ֆակտորիաները պաշտպանող փոքրիկ զորախմբերը։ Հնդիկ հայրենասերները շրջապատում են ամրոցը և սկսում գրոհը։ Հնդկաբն զորքի հարձակմանը զուգորդում է ամրոցի հնդիկ բնակչության ապստամբությունը։ Անգլիական հրամանատարությունը տեսնելով, որ կրկրկնվում է Փաթանայի ողբերգությունը, բացում է ամրոցից դեպի գետը տանող գաղտնի դռները և նավերով փախչում։ Քաղաքը գրաված հնդկական զորամասերի ձեռքն է ընկնում հսկայական ռազմավար և հարստություն։

Հերոսական այս օրերին հնդիկ հայրենասերները այնքան բարձր են գնահատել հայերի դերը, որ Մարսուդաբադում և մյուս քաղաքներում տարած հաղթանակից հետո, հնդկական դրոշակի հետ միասին, ի պատիվ իրենց փոքրաթիվ դաշնակցի բարձրացվել է նաև հայկական դրոշակը[2]։

Երկրորդ խոշոր հաղթանակից հետո, երբ նահանջող անգլիական զորամասերը կորցնում են իրենց մարտունակությունը, Միր-Կասիմը և Գեորգին հանձնարարում են Մարգարին շարունակել հետապնդումը և բաց ճակատամարտում ջարդել անգլիացիներին։ Թշնամին հասկանալով հընդիկների մտադրությունը՝ փախչում է պատերազմելով։ Նրանք խույս են տալիս ճակատամարտից, լավ հասկանալով, որ իրենց հոգնած և արյունաքամ զորքը անկարող կլինի շատ թե քիչ լուրջ դիմադրություն ցույց տալ հնդիկներին։

Գեորգին իր նախագիծը իրականացնելու համար կարգադրում է Մունկերի զորքերի հրամանատարներ Դր. Այվազյանին և Հաջիփուռի աղա Նրնդրամ Ճոդրիին՝ իրենց զորամասերով օգնության շտապել թշնամուն հետապնդող բանակին և կտրել նահանջող թշնամու ճանապարհը։ Օգնության շտապող զորքերի հրամանատարների մեջ լինում են երեք հայեր՝ Մկրտիչ Զաքարիա (Նոր Ջուղայից), Մելքում (աստրախանցի) և Նիկողայոս (երևանցի)։ Հնդկական այս զորախմբի զորքերը երկու օրվա ընթացքում հաջողությամբ անցնում են Գանգեսը և հաջորդ օրը լուսաբացին հանկարծակի գրոհում անգլիական նահանջող բանակի վրա։ Տեղի է ունենում ճակատամարտ։ Աքցանի մեջ ընկած անգլիացիները չեն կարողանում երկար դիմադրել և զենքը ցած են դնում։ Այս ճակատամարտում սպանվում են բավական թվով անգլիացիներ, այդ թվում նաև զորամասի հրամանատարը[3]։

Գանգեսի ափին տեղի ունեցած այս ճակատամարտից հետո, Միր-Կասիմը հատուկ հրովարտակով անգլիացիներին հայտարարում է Հնդկաստանի թշնամիներ և հանձնարարում իր բաղաքացիներին՝ անգլիացու հանդիպելիս ձերբակալել ու հանձնել կառավարությանը։

Հնդիկները անգլիացիներից մաքրում են գրեթե ամբողջ Բենգալիան, բացառությամբ Կալկաթայի, Զաթիգամի և Բարդվանի։

Չկարողանալով բաց ճակատամարտում հաղթել հնդիկներին, անգլիացիները դիմում են խարդախ միջոցների. նրանք փորձում են կաշառել Գեորգի խանին և մեծամեծ խոստումներ անելով առաջարկում են անցնել իրենց կողմը։ Սակայն Գեորգին մերժում է այդ ստոր առաջարկը և պատասխանում, որ մինչև իր մահը հավատարիմ է մնալու հնդիկներին։

Այս անգամ անգլիացիները, Գեորգի խանին և մյուս հայ հրամանատարներին շարքից հանելու նպատակով, փորձում են զանազան ստոր ճանապարհներով նրանց ամբաստանել Միր-

---

[1] П. К. Синха и А. Ч. Банерджи. История Индии, Москва, էջ 309։
[2] Խոջամալյան, Պատմութիւն Հնդկաց, էջ 97։
[3] Նույն տեղում։

Կասիմի առաջ, սակայն նավարը «զնոսա չարախոսությունն մերժէր և զհայս արդարացուցանէր», պատասխանելով, որ «նոցա սրարբ և դործք են իմ արարս և գործքս»[1]։

Փորրիկ դադարից հետո, երբ անգլիացիները կարգի են բերում իրենց ռազմական ուժերը, նորից առաջ են քաշում Միր-Ջաֆարին դահը վերադարձնելու հարցը և նրան դահ բարձրացնելու նպատակով 6000-անոց մի բանակ «եղին ի ձեռս մեջեր Ադամ սպարապետին իրեանց և առաքեցին» հնդիկների վրա։ Հնդկական հրամանատարությունը լավ իմանալով, որ գաղութարարները հեշտ չեն զիջի իրենց դիրքերը և նոր հարձակման են դիմելու, նախապատրաստվում են դիմադրության։ Միր-Կասիմն ու Գեորգին մինչ այդ պաշն էին կնքել մի քանի հայրենասեր հնդիկ ռաջաների հետ՝ ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարելու համար։ Այդ ռաջաները իրենց զորքերը դրել էին Գեորգի խանի ընդհանուր հրամանատարության տակ։

6000-անոց անգլիական բանակը ռազմական երթով շարժվում է Բենգալիայի վրա՝ նպատակ ունենալով նորից գահ բարձրացնել իրենց կամակատար Միր-Ջաֆար խանին։ Սակայն կես ճանապարհին գաղութարարների վրա են հարձակվում Գեորգու դաշնակիցներ Մաքսուդաբադի ռաջա Սեիդ Մահմադ խանի զինվորներն ու Բիրանայի բաղարագլուխ Մահմադ Թագիի հեծյալները և ջարդելով նրանց, փախուստի են մատնում։ Հետապնդման ժամանակ, դժբախտաբար, սրանք ընկնում են տղմուտի մեջ և հանդիպելով անգլիական թարմ ուժերին, նահանջում են։

Այնուհետև անգլիացիները համալրելով իրենց ուժերը անցնում են հակագրոհների։ Զգալով մոտեցող վտանգը, Գեորգի խանը Կալկաթայից եկող ճանապարհների ուղղությամբ դասավորում է իր հիմնական ուժերը և սպասում թշնամուն՝ ճակատամարտ տալու համար։ «Յորժամ լուան Կասումալի խանն, Գորգի խան թէ ազգն ինկլիզաց պատրաստեալ զօրօք գան ի վերայ իրեանց ի պատերազմել, վաղվաղակի իրեանք ևս ժողովեցին զզօրս իրեանց յամենայն կողմանց»[2]։

Այս ճակատը ուժեղացնելու նպատակով Գեորգին մի բանի նոր զորամասեր է տեղափոխում անգլիացիների դեմ։ Տեղափոխված հնդկական զորամասերի թվում էին նաև Մարգար Քալանթարյանի և Ղազար Հակոբյանի զորագնդերը։ Հյուսիսային սահմանների պաշտպանությունը այս ծանր օրերին դրված էր Գրիգոր Այվազյանի զորամասերի վրա։

Դժբախտաբար, Միր-Կասիմը անգլիացիների դեմ գործող բանակի հրամանատար է նշանակում կասկածելի մի մարդու՝ ոմն Սմուրի, որը հնդկական պատմագրության մեջ ճանաչված է որպես բախտախնդիր մի անձնավորություն։ Գեորգի խանը մնում է բանակի ընդհանուր հրամանատար։

Հայ պատմիչը վշտով է պատմում, թե ինչ բացասական ազդեցություն ունեցավ Գեորգու բացակայությունը գործող բանակում։ Երբ հրամանատարները լսեցին, պատմում է նա, որ ճակատամարտը ղեկավարելու է Սմուրը «...կիսասիրտ և տխրութեամբ գնացին գնդօք իրեանց ի պատերազմն...»։ Ըստ հայկական աղբյուրի վկայության, հնդկական բանակը, կազմված 21.000 զինվորից, Սմուրի ղեկավարությամբ ռազմական երթով շարժվում է և դիրքեր գրավում Սոնթադարա կոչվող դաշտավայրում, Գանգեսի վտակներից մեկի ափին։ Այստեղ հնդկական զորքերին են միանում դաշնակից Սեիդ Մահմադ խանի զորամասերը։

Այս ճակատամարտին իրենց զորքերով մասնակցել են նաև հայ հրամանատարներ Մարգար Քալանթարյանը, Հարություն Մարգարը և Ղազար Հակոբյանը։ Սմուրի կարգադրությամբ նրանց զորամասերը դիրքեր են գրավում հետևյալ դասավորությամբ. «... յարևմտեան կողմն հեղեղատին զբանակն հազարապետին Յարութիւնի, չորս բենեկօք եւ ի մէջ հարաւ և արևմուտ սակաւ ինչ հեռի ի նմանէ բնակեցոյց զբանակն Ղազարայ չորս բենեկօք և ի մէջ հարաւ և արևմուտ բնակեցոյց զբանակն Ղազարայ չորս բենեկօք...»[3]։

Մինչ Սմուրը զբաղված էր զորքերը դասավորելով, անգլիացիներն անցնում են գետը և հարձակվում հազարապետ։ Ղազար Հակոբյանի զորամասերի վրա։ «Տեսեալ այս քաջին Մարգարայ, փութով առաքեաց զզօրս իր յօգնութիւն նորա»[4]։ Երկու հայ հրամանատարները իրենց հնդիկ զինվորներով ոչ միայն կարողանում են դիմադրել թշնամուն, այլև իրենք են անցնում հակագրոհի և անգլիացիներին հետ շպրտում. «...ինկլիզացն քաջութեանց Հայոց ի փորձառու գոլով իսկ՝ թողին զնոսա ի բաց և չոգան պատերազմ ընդ սպարապետն Սմրուայ»[5]։

---

[1] Խորամալյան, Պատմութիւն Հնդկաց, էջ 99։
[2] Նույն տեղում, էջ 102։
[3] Նույն տեղում, էջ 104։
[4] Նույն տեղում։
[5] Նույն տեղում.

Անգլիացիները տեսնելով, որ թևից կատարվող գրոհը տապալվեց, իրենց հարվածն ուղղում են կենտրոնի վրա, որը սկսում է նահանջել։ Չկարողանալով ճկուն տեղաշարժներ կատարել, Սմուրը հրամայում է Հակոբյանին՝ զորքերը պահել իրենց դիրքում՝ վախենալով թևից եկող նոր գրոհից։ Այսպիսով, զորքերի մի մասը մատնվում է անշարժության և զրկվում ճակատամարտին մասնակցելու հնարավորությունից։ Սմուրի այսպիսի անշնորհքության հետևանքով «...զօրք բաջացն Հայոց կանգնեալ կան և ոչ պատերազմին»[1]։

Ապաշնորհ Սմուրը ճակատամարտը ղեկավարելու և ճեղքվածքը փակելու փոխարեն, փախչում է։ Հնդկական զորքը, մնալով առանց հրամանատարի, սկսում է անկանոն նահանջել։ «Թէպէտ և հարիւրապետք Հայոց ջանացան քաջալերել զգունդս սպարապետին իւրեանց, բայց չեղև հնար»։

Սմուրի զորամասի փախուստից հետո, անգլիացիներն իրենց հարվածները դարձնում են Մարգարի զորագնդի վրա, բայց «արին և նախանձայոյզ հազարապետն Ղազար իրովք գնդօքն չոգաւ և միացաւ ընդ հազարապետին Մարգարայ։ Եւ արարին պատերազմ սաստիկ ընդ ինկլիզայ ժամս իրրև վեց, փախուցանելով զնոսա մինչև կամուրջ հեղեղատին»[2]։

Երբ ցրված և հոգնած հնդկական զորքը վերադառնում էր իր դիրքերը, զինվորները նկատում են Սմուրի ռազմադրոշով իրենց մոտեցող մի մեծ զորախմբի և կարծելով, թե դա հնդկական բանակի նահանջած զորախումբն է, որ վերաղասավորվելուց հետո Նորից գալիս է ճակատամարտի վայրը, մոտ են թողնում։ Պարզվում է, որ դա անգլիական բանակի մի զորամասն է, որը վերադառնում է հետապնդումից։ Հոգնած հնդիկները չեն կարողանում երկար դիմադրել երկու կողմից գրոհող անգլիական զորամասերին և մեծ կորուստներ տալով նահանջում են։

Այս անհաջող ճակատամարտից հետո Գեորգի խանին հանձնարարվում է շտապ դասավորել ուժերը։ Նա Ռաջմահալի մոտ նահանջած զորամասերը համալրում է թարմ ուժերով և պատրաստվում նոր ճակատամարտի։ Սակայն այս անգամ էլ նավարը նրան չի թողնում ղեկավարելու ճակատամարտը, այլ հանձնարարում է Սմուրին։

Գեորգի խանի վերակազմավորված զորքերը Սմուրը դասավորում է Գանգեսի ափին, Բիրբունտանտաոի մոտ այնպես, որ հայ հրամանատարները պաշտպանում են նրա առջևի ձախ թևերը։ Նրանց գնդերը համալրվել էին Սեիդ Մահմադ խանի և օգնության եկած Նջիբխան ռաջայի 6 000 անոց զորքով «մեծի մասամբ հեծյալ»։ Գետանցքի դիրքերը պահպանում էր այդ նպատակով Մունկերից տեղափոխված Պետրոս Ջուղայեցու գունդը՝ իր հրետանիով։ Ճակատամարտի ժամանակ հնդկական զորքերը, Մարդար Քալանթարյանի ղեկավարությամբ, անցնում են հակագրոհի, խորանում թշնամու զորաշարքերի մեջ և փախուստի մատնում նրանց։ Ճակատամարտը շարունակվում է չորս ժամ։ Կլայվի վկայությամբ, անկարելի էր ավելի լավ կռվել, բան այստեղ կռվում էր նավարի բանակը։ Գործողության ընթացքում նրանք նույնիսկ թափանցում են անգլիական պաշտպանական դիծը և գրավում նրանց երկու թնդանոթ։ «Հաղթանակը թվում էր հավանական»[3]։ Սակայն շուտով սպառվում է հնդկական կռվող զորամասերի ռազմամթերքը։ Սմուրը զինամթերք և օժանդակ ուժ ուղարկելու փոխարեն, շրջապատման վտանգի պատճառաբանությամբ հետ է կանչում զորքը։ Նավարը կատարում է անթույլատրելի մի այլ սխալ։ Ընդառաջելով Սմուրի դիմումին, ազատում է Մունկերի բանտում պահվող, Փաթանայի և մյուս ճակատամարտերի ժամանակ գերի վերցված անգլիացի, գերմանացի և ֆրանսիացի հրամանատարներին և ուղարկում նրա հրամանատարության տակ։ Օտարազգի այս հրամանատարները լինելով ռազմաճակատում և ծանոթանալով հնդկական զորքի ռազմական գաղտնիքներն, հաջորդ օրն իսկ դավաճանում և անցնում են անգլիացիների կողմը։

Անգլիացիները փախստականներից իմանալով հնդկական զորքերի դիրքերի դասավորությունը, սկսում են ռազմական վճռական գործողություններ։ Խոջամալյանի վկայությամբ, անգլիացիները դիմում են խորամանկության. նրանց մի զորամասը ծպտված, հնդկական բանակի հագուստով, գալիս է հնդկական բանակի պարեկի մոտ և ներկայանում որպես «...ի պահապանաց Մարգարայ, որք գնացաք շրջել ընդ բանակին ինկլիսաց առ ի լրտեսութիւն ի պարագայից նոցա...»։ Նրանք շարքից հանում են պարեկին և մոտենալով Քալանթարյանի ղեկավարած զորամասի դիրքերին «կրակ են բացում հնդիկների վրա, մինչ սրանք կկարողանային «հնչեցուցանել զփողն և հարկանել զթմբուկս պատերազմին և պատրաստել ի ռազմն»։ Հարևան դիրքերում

---

[1] Թ. Խոջամալյան, Պատմութիւն Հնդկաց, էջ 105։
[2] Նույն տեղում, էջ 106։
[3] «Բազմավէպ», 1880, էջ 243։

գտնվող Հղզարեցի կոչվող հնդկական զորամասերը սխալմամբ կրակ են բացում այս զորամասի վրա։ Չնայած ծանր կացությանը, հնդիկները կատաղի դիմադրություն են ցույց տալիս։ Մինչև հղզարիները կիմանային իրենց սխալը և զենքը շուռ կտային իսկական թշնամու վրա, անգլիական գերակշիռ ուժերը անցնում են հարձակման և ջարդելով նրանց դիմադրությունը, փախուստի են մատնում նրանց։ Սմուրը տեսնելով այս ծանր վիճակը, փախչում է ռազմի դաշտից, թշնամու ձեռքին թողնելով բանակի դրոշը։ Մարգարը տեսնելով այդ, ինքը ևս նահանջում է Մունկեր։

Գեորգին խիստ է վարվում պարտված զորաբանակի հրամանատարության հետ. նրանցից շատերին պատվազուրկ է անում և հեռացնում պաշտոնից։ Նա նույն խստությամբ է վարվում նաև իր այն հայրենակիցների հետ. որոնք չէին արդարացրել իրենց այս ճակատամարտում։ Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար, Միր-Կասիմը և Գեորգի խանը որոշում են իրենց զորքերը հետ բաշել Ռոտոսգարա ամրոցը, նոր զորք հավաքել մարաթներից և կրկին «տալ պատերազմ ընդ ինկլիզաց»։

Մունկերում թողնելով մի փոքրիկ կայազոր գնդապետներ Պետրոս Աստվածատրյանի և Ղազար Հակոբյանի հրամանատարության տակ. Միր-Կասիմը և Գեորգին իրենց զորքերը շարժում են դեպի Փաթանա, այնտեղից էլ՝ Ռոտոսգարա ամրոցը։ Ճանապարհին նրանք զորքերին հանգիստ տալու նպատակով կանգ են առնում Տելիոփուռ գետի ափին։ Այստեղ, կանգառի հաջորդ գիշերը, երբ Գեորգին իր երեք թիկնապահներով շրջում է իր բանակատեղիում, անգլիարները իրագործում են իրենց ստոր դավերից մեկը՝ սպանել են տալիս Գեորգի խանին։

Բարձրացած աղմուկի վրա զորքը արթնանում է և իմանալով բանի էությունը, շրջապատում է դավադիրներին ու սրախողխող անում բոլորին, բացառությամբ մեկի, որին հաջողվում է փախչել։ Մահամերձ վիրավոր Գեորգուն տեղափոխում են նավարի վրան։ Ըստ Խոջամալյանի վկայության, Միր-Կասիմը «արտասուալից աչօք լար և ասէր. Եղբա՛յր, զիա՞րդ ոչ լուար ինձ, քանից պատուիրեցի քեզ, թէ առանց պահապանաց աստ անդ մի շրջեր»[1]։

Բժիշկների օգնությունն ապարդյուն է անցնում. 1763 թվականի օգոստոսի 11-ին վախճանվում է Գեորգին։ Միր-Կասիմը անգլիացիների դավադրությունից զայրացած, իր հրամանատարի վրեժը առնելու համար կարգադրում է սպանել երկրի բանտերում պահվող դերի ընկած բոլոր անգլիացիներին։

Հնդիկ հայրենասերները կորցնելով իրենց հրամանատարին, զենքը վայր չեն դնում, այլ շարունակում են իրենց հերոսական պայքարը անգլիացիների դեմ։ Սակայն այժմ Միր-Կասիմը գտնվում էր ավելի ծանր դրության մեջ, քանի որ նրա դեմ սկսել էին գործել նաև անգլիացիներին համակիր նավարների ուժերը։ Անգլիական ռազմական խոշոր ուժերը, որոնք արդեն անցել էին վճռական գործողությունների, մտնում են երկրի խորքերը։ Նրանք գրավում են Բենդալիայի բաղաքներն ու ամրոցները և մի քանի արյունոտ ճակատամարտերից հետո շրջապատում Փաթանան։

Նախքան հարձակման անցնելը անգլիական բանակի հրամանատարությունը դիմում է շրջապատված հնդկական ամրոցի կայազորի հրամանատար Պետրոս Աստվածատրյանին և պահանջում՝ «...զի հանձնեսցէ ինքեանց զամրոցն։ Վերջինս հրաժարվում է։ Ինը օրվա կատաղի կռիվները ոչ մի արդյունք չեն տալիս։ Անգլիացիները ամրոցի հրամանատարի մոտ պատվիրակ են ուղարկում Բենդալիայի նախկին նավաբ Ջաֆար Ալի խանին, ասելով նրանց. «Ընդե՞ր պատերազմես ընդ մեզ և ոչ իջանես յանձնել զամրոցդ, որո՞յ յուսով, մի՞թէ ոչ գիտես կամ ոչ լուար տակաւին զմահ Գորգին խանի»։ Ապստամբ ուժերը հրաժարվում են հանձնվել, շարունակելով պայքարը։ Սակայն չորս կողմից շրջապատված քաղաքը ընկնում է ծանր վիճակի մեջ։ Բացասարար է ազդում նաև Գեորգու մահվան լուրը։ Սնունդի և ռազմամթերքի պակասը մղում է դասալքության։ 22-օրյա պաշտպանությունից հետո Այվազյանը, Միր-Կասիմի հանձնարարությամբ, բանակցության մեջ է մտնում անգլիացիների հետ և «խաղաղութեան դաշն» կնքում։ Այս բանակցություններին հնդիկների պատվիրակության կազմում մասնակցում էին երկու հայ հրամանատար։

Շուտով ընկնում են նաև Բարսարը և Ռոտոսը։ Միր-Կասիմն իր զորքերի մնացորդներով հեռանում է երկրից և գնում Բենարես, իր բարեկամ ռաջա Շիրազ-Դովլուի մոտ՝ նրանից օգնություն խնդրելու, «զի որպէս հարազատ եղբայր միաբանեսցէ ընդ ինքեան և գնացեալ պատերազմեսցէն ընդ ազգին ինկլիզաց...»[2]։

---

[1] Խոջամալյան, Պատմութիւն Հնդկաց, էջ 119։

[2] Նույն տեղում, էջ 120։

Միր-Կասիմը ստանալով ռաջա Շիրազ-Դովլուի և Շահ Ալեմ թագավորի օգնությունը, իր փոքր զորախումբը թողնում է Բենարեսում Գրիգորի և Սուքիասի հրամանատարության տակ, իսկ ինքը շարժվում անգլիացիների վրա։ Քսանհինգ օր տևող կռիվները ոչ մի արդյունք չեն տալիս։ Այդ կռիվներից մեկի ժամանակ ծանր վիրավորվում է Շիրազ-Դովլուն և իր զորքերը հետ է քաշում։

Հետագա գեպքերը ողբերգական հանդիսացան Բենգալիայի նավարի համար. նա հարկադրված հեռանում է քաղաքական ասպարեզից։ Հայ հրամանատարները չցանկանալով վերադառնալ օկուպացված Բենգալիա, սիրով իրենց համաձայնությունն են հայտնում ծառայելու Շիրազ-Դովլուի բանակում։ Նրանք երկար ժամանակ և մեծ նվիրվածությամբ ծառայում են հնդկական բանակում և հերոսաբար կռվում անգլիական գաղութարարների դեմ, որի շնորհիվ ռաջան «յոյժ սիրեաց զազգս մեր, և բերեալ Գրիգոր Այվազեան արար զնա սպարապետ ինքեան և ետ ի ձեռս նորա զզօրս բազումս... Գրիգոր արար կրկին զմեծամեծ բաջութիւնս... և ժողովեաց յազգէս մերմէ այրս իբրև վաթսուն, որք կան այժմ աշխարհին ասդ, և ունին զանուն բաջութեան սփռեալ ընդ ամենայն Հնդկաստան...»։

Ապստամբությունը արյան մեջ խեղդելուց հետո, անգլիացիները անցնում են ռեպրեսիաների։ Հարկային գիշատիչ քաղաքականության և կողոպուտի արդյունքը եղավ 1769—1770 թթ. սարսափելի սովը, որը ոչնչացրեց հարուստ և մարդաշատ Բենգալիայի բնակչության $^1/_3$-ը, այսինքն՝ 10 միլիոն մարդ[1]։

Խոսելով այս սովի մասին, Կ. Մարքսը նշում է, որ «1669—1670 թվականներին անգլիացիները արհեստական սով սարքեցին, ամբողջ բրինձը գնելով և հրաժարվելով այն այլ կերպ վաճառել, բայց եթե արհեստական բարձր գներով»[2]։ Նույնիսկ իրենք՝ անգլիական գաղութարարները խոստովանում են, որ ամբողջ Բենգալիայի հարթավայրը ծածկվեց հայրենասերների ոսկորներով։

Հալածանք սկսվեց նաև հայերի նկատմամբ։ Անգլիական ճնշումները այն աստիճանի հասան, որ հայերը ստիպված եղան հեռանալ այս շրջանների մեծ մասից[3]։ Անգլիացիները հայերի նկատմամբ կատարեցին մի այլ բռնություն ևս։ Ինչպես հայտնի է, Հնդկաստան նոր մուտք գործած «Արևելահնդկական ընկերությունը» դաշինք էր կնքել հայ վաճառականների ներկայացուցիչ խոջա Փանոս Քալանթարի հետ, որով հայերին տրվել էին առևտուր անելու և ընկերության զբաղեցրած տերիտորիաներում բնակվելու լայն իրավունքներ[3]։ Այս դեպքերից մի քանի տարի անց, Անգլիայի համայնքների պալատում հատուկ քննության առնվեց «Արևելյան հնդկական ընկերության» տերիտորիաներում ապրող հայերի իրավունքի հարցը։ Համայնքների պալատը նկատի ունենալով հայերի «անշնորհակալությունը», նրանց զրկեց նախկին իրավունքներից[4]։

ВОССТАНИЕ ИНДИЙСКОГО НАРОДА ПРОТИВ АНГЛИЙСКИХ КОЛОНИЗАТОРОВ В 1760—1763 ГОДАХ И АРМЯНСКАЯ КОЛОНИЯ В ИНДИИ

Р. А. АБРАМЯН

(Резюме)

В истории освободительных войн индийского народа против английских колонизаторов исключительное большое значение имеет борьба индийцев в Бенгалии в 1760—1763 гг. Об этой борьбе ценные сведения сохранились в «Истории Индии» Товмаса Ходжамаляна, источником которой послужили документы архива Шах Алема и воспоминания участников этих событий.

---

[1] Ջ. Ս. Կիրակոսյան, Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը, Երևան, 1957, էջ 14—15։

[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 786։

[3] Տե՛ս «Ազգասեր», Կալկաթա, 1846, № 37, էջ 132—138, № 38, էջ 139—141, № 39, էջ 147—148, № 40, էջ 156—157։

[4] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ 148, տետրակ 21, էջ 28—31։ Հմմտ. Փ. Հ. Գրիգորյան, Հայ առաջավոր քաղաքական-հասարակական մտքի պատմությունից, Երևան, 1957, էջ 17։

Руководителем восставших бенгальцев против англичан являлся Мир-Касим, который, будучи навабом Бенгалии, выступил против завоевателей и выгнал чужеземцев из своего родного края. Он организовал из свободолюбивых индийских патриотов боевую армию, назначив ее командующим армянина Григора Арутюняна, известного в индийской литературе под именем Георги-хан. Георги-хан оказался талантливым организатором; он сумел организовать на месте производство оружия, пушек и боеприпасов и хорошо вооружить индийскую армию. В командный состав своей армии Георги-хан принял много своих сородичей, которые в рядах индийцев доблестно сражались с англичанами. Мир-Касим и другие раджи и махараджи Индии всячески поддерживали армянских переселенцев, нашедших гостеприимный приют у индийского народа. Борьба индийцев в Бенгалии против английских колонизаторов продлилась три года. Индийский народ героически сражался против своего врага и многократно наносил ему поражения. Интересен тот факт, что каждый раз после победы над англичанами вместе с индийскими знаменами поднимали также армянское знамя, как знамя преданного союзника. Многие армянские полководцы, служившие в индийской армии, были награждены Мир-Касимом за храбрость и отвагу.

Независимость Бенгалии, однако, продлилась недолго; английские колонизаторы мобилизовали все свои силы и в 1763 г. подавили восстание бенгальцев. После захвата Бенгалии англичане стали предавать казни восставших патриотов, в том числе и армян. После этих событий решением английской палаты общин было отменено право армян на свободную торговлю в колониях англичан, как «народа неблагодарного».